ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձը՝ Գևորգ Կոստանյան

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2018 թվականի հունվարի 25-ից 27-ը

Հրավիրող կողմը՝ ՄԻԵԴ

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԻԵԴ-ի հանդիսավոր նիստին և «Դատական իշխանության հեղինակությունը» խորագրով աշխատաժողովին

Քննարկված թեմաները՝ դատական իշխանության հեղինակության մարտահրավերները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2018 թվականի հունվարի 26-ին ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանը մասնակցել է ՄԻԵԴ-ի հանդիսավոր նիստին, որը նվիրված էր 2018 թվականի ՄԻԵԴ-ի նստաշրջանի բացմանը, ինչպես նաև «Դատական իշխանության հեղինակությունը» խորագրով աշխատաժողովին:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են այնպիսի կարևոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են դատական իշխանության հեղինակության մարտահրավերները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները: Մասնավորապես, դատական իշխանության հեղինակության մարտահրավերներ թեմայի շրջանակներում աշխատաժողովի մասնակիցները քննարկել են այնպիսի

հիմնահարցեր, ինչպիսիք են դատարանների և դատավորների պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև իշխանությունների բաժանումը: Անդրադառնալով ծառացած մարտահրավերների հաղթահարման հնարավոր ուղիներին՝ հատուկ ուշադրություն է դարձվել դատական իշխանության կողմից այդ մարտահրավերներին ի պատասխան ձեռնարկվող լավագույն միջոցառումներին, ինչպես նաև հաղորդակցության մարտավարությանը:

Աշխատաժողովի հիմնական զեկուցողներն էին ՄԻԵԴ-ի նախագահը և դատավորները, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը, Իտալիայի սահմանադրական դատարանի փոխնախագահը, Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի պալատի նախագահը, դատավորներ Շվեյցարիայի դաշնային վարչական տրիբունալից, ինչպես նաև Սերբիայի գերագույն և գերագույն վճռաբեկ դատարաններից: